Հ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

ԳՅՈՒՄՐԻ «ՊՐՈԳՐԵՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Ա/Կ-ի

ԵՎ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Գյումրի 24.01.2024թ.

Գյումրիի «ՊՐՈԳՐԵՍ» համալսարան Ա/Կ-ն (այսուհետև՝ Համալսարան), որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, ի դեմս ռեկտոր Ռաֆիկ Խաչատրյանի, և **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (ՇՊՀ)**, որը գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, ի դեմս ռեկտոր Ե. Սերոբյանի, (այսուհետ՝ Կողմեր), ստորագրեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր):

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են ՀՀ օրենսդրության շրջանակում համագործակցել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող՝ Կողմերի գործունությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Համաձայն սույն Հուշագրի՝ համագործակցել հետևյալ ուղղություններով.

2.1 Կրթական բնույթի ծրագրերի իրականացում,

2.2 Գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում,

2.3 Գիտական մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ փոխանակում,

Համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում և խնդիրների լուծում,

2.5 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, ինչպես նաև՝ դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկության տրամադրում:

3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն Հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական և այլ լրացուցիչ պարտավորություններ չի առաջացնում: Կողմերն առանձին դեպքերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրի 2-րդ մասով սահմանված որոշակի ուղղությունների հետ կապված ծառայությունները կարող են իրականացվել դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ֆինանսական բնույթի գրավոր համաձայնագրերով՝ պայմանավորված այս կամ այն կողմի ուժերով իրականացվող աշխատանքների ծախսատարությամբ:

3.2. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյումրիի «ՊՐՈԳՐԵՍ» Համլսարան Ա/Կ	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
Հասցե՝3101, ՀՀ, ք.Գյումրի, Տիգրան Մեծի 1	պետական համալսարան» հիմնադրամ
Հեռ. (312) 5-51-80	Հասցե՝ 3126, ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4
Էլ. հասցե՝ progress_am@rambler.ru	Էլ. հասցե՝ info@shsu.am
Կայքէջ՝ https://progress-hamalsaran.am	Կայքէջ՝ www.shsu.am
Ֆեյսբուքյան էջ՝ Progress Hamalsaran	Հեռ.՝ (312) 2 66 00

Ռեկտոր՝

Ռ. Խաչատրյան

Ռեկտոր՝

Ե.Մերոբյան